61. ՄԵՂԱՎՈՐ ԿՆԻԿ

Կէղի, չէղի, մեկ կնիկ մե կէղի։ Գելնի կէրթա ուր փանջրրու։ Կտեսնի էրկու նորընձա էնդեհեն էկավ։ Էդ կնիկ կվերու կըսա. «Վոլա, ես պտի էրթամ իտա նորընձեներուն իմ մեխք խոստովանիմ, ախըր գեղի իրիցուն իմ էրես չրռնա ես խոստովանիմ, ընդրանք կարիր էրեց են»։

Գելնի, էլ փանջար չքաղա, ուր մեղար կշալկա ու դեմ գիգա էդ էրկու նորընձին։ Գուգա, կըսա.

— Նորընձեք, մեկ խոստովանանք մի կուզեմ էնիմ, կարելի՞ ա։

Նորընձեք լէ կըսին.— Խոստովանանք կէղի, հ՚որի՞ չէղի։

Նորընձեն էն՝ մեկ նորընձին կըսա.— Դո՛ւ տար խոստովանցու։

Էն մեկել նորընձեն կվերու կըսա.— Չէ՛, դու տար խոստովանցու։

Էդ հ՚առաճի նորընձեն կառնի զէդ կնիկ ու կէրթա, փըշըմր զատ կշոքըցու մեջ խոտերուն ու կխոստովանցու։

Էդի օր կխոստովանի, մեկ մեկ լավոզիկ սև օձ գելնին ըդ կնկա բերնեն, կքաշվին խոտերու մեջ։

Էդ մեկել նորընձեն լէ նստեր ա սաղմոց կքաղա։ Կտեսնի օր ըդ կնկան բերնից մեկ մեկ լավոզիկ սև օձ գելնին ու կքաշվին էդ խոտերու մեջ։ Բայց էն տերտեր օր կխոստովանցու, չտեսնի։ Էն

տերտեր օր սաղմոց կքաղա, կտեսնի օր վերջ մեկ վիշբի պես մեծ օձ էդ կնկա բերնեն դելնի մեկ թիզ դուս, ուր կուշտ ու բոլոր կաչքա ու էվլան կքաշվի, կմտի էդ կնկա բերան։

Իրեք հաղ էդ օձ ուր գլոխ կհանա դուրս, ուր կուշտ ու բոլոր կաչքա ու էլման կքաշվի, կմտնի կնկա բերան։

Էդ պզտիկ լավոզիկ օձեր էդ կնկա մեխքն էր, օր կքաշվին խոտերուն մեջ. էդ մեծ օձ, էդի մեծ մեխքն էր։ Կնիկ կէներ օր ճոչ մեխք տերտրոջ խոստովաներ, օձն ուր գլոխ դուրս կհաներ, իգա հախսի կնիկ ինքն ուրին կըսեր. «Վոլա, իմ էրեսին չբռնա օր ես տերտրոջ ըսիմ»։ Էդ իրեք հաղ լէ կնիկ էդ ճոչ մեխք էրեց օր տերտրոջ ըսեր, ուր էրեսին չբռնեց օր տերտրոջ խոստովաներ։

Տերտեր ըսեց.— Օրշնած, էլ մեխք ունի՞ս ըսելու, ըսա։

Ըսավ.— Տեր հայր, էլ մեխք չունիմ ըսելու։

Տերտեր էնտեխ խոստովանելու գիր կարթաց ընդոր գլխու վրա. տեսավ օր էդ օձեր խոտերու մեջեն քաշվան ու էկան էլման ըդ կնկա բերան։

Կնիկն էր էլավ, տերտրոջ ծեռն խամբուրեց ուր միզար փանջար շալկեց ու գեղի ճամբախ տվեց ուր հ'առեճ, ու դեպի գեղ գնաց։

Նորընձեն օր խոստովանցուց էդ կնիկ, դնաց էն մեկել նորընձի մոտ օր սաղմոց կկարթեր։ Էն նորընձեն օր սաղմոց կկարթեր, ըսեց.

— Տեր հա՛յր, տեսա՞ր էդ ինչ էղավ։

Ըսեց.— Չէ՛, ի՞նչ էղե։

Ըսավ.— Նորընձա՛, դու էն կնիկ օր խոստովանցուցիր, մեկ մեկ բարակ լավոզիկ օձեր, կար հարիր հատ, էլան ու քաշվան խոտերու մեջ, վերջ,— ըսեց,— տեսա մեծ վիշաբ օձ մի իրեք անգամ ուր գլոխ հանեց դուրս, ուր կուշտ ու բոլոր աչքեց օր ինք լէ էրթեր խոտերու մեջ, էվլան մտավ կնկա բերան, չգնաց. նորընձա, դու օր ըսիր. «էլ խոստովանանք ունի՞ս, ըսա», էն էլ ըսաց. «Չէ, չունիմ»։ Օր դու ինոր խոստովանագիրք օր կարդացիր, էդ օձեր բոլորով էկան լցվան կնկա բերան։

Նորընձեն ըսեց.— Տերտեր, օր էդըմլա ի, էլի էրթանք ըդ կնկա հետևից, էդ կնկա տուն, զոռաքի բերինք զէղի խոստովանցունք, բալքի ուր ծանդր մեխքեր ըսա, ուր մեխքերուց ազատվի։

Էլան էդ էրկու տերտեր հ'ընգան ըդ կնկա հետև ու գացին։ Գացին, կնիկ մտավ գեղի մեջ, ուր տուն։

Տերտերներ լէ գացին իրիցփոխանի տուն խարցուցին ու տուն մտան։ Գացին հ՚օղեն իրիցփոխան էկավ.

— Օրշնա ի տեր։ Բարի եք էկե, նորընձեք։

— Աստված օրշնա, իրիցփոխան,— ըսեցին,— իրիցփոխան, էս ջալաբ (տեսակ) կնիկ մի, էկեր էր սար փանջարի, ընդոր տուն ո՞ր մեկն ա, մրզի նշանցք տաս, էրթանք ընդոր տուն։

Ըսավ.— Տեր հայր, էն կնիկ էկավ տուն, ուր շալակ դրեց գետին ու մեռավ։

Էդ էրկու նորընձեն առավոտուն էլան էկան էդ կնկա կարքն կատարեցին, էդ կնիկ վերուցին տարան գերեզմնոց խորեցին ու ժողովրդի խետ դարձան էկան էդ կնկա տուն։

Էդ կնկան էդ էրկու տերտեր հոգոց մի ըսեցին ու էլան գացին իրիցփոխանի տուն, կերակուլ կերան։ Իրիցփոխանի խաթրն առան ու ճամրախ ընկան։

Մեկ չորս խինդ սահաթ ճամրախ գացին։ Էդ նորընձեն օր զէն կնիկ խոստովանցուցեր էր, ըսեց.

— Նորընձա, արի, պատարաք մ՚էնինք ըդ կնկա խամար, մրզի վարցք ա, բալքի մեխքեն ազատինք։

Գելնին կտեսին օր հանդե հ՚եր (քարայր) մի էկավ նորընձեներուն ռաստ։

Էն նորընձեն օր սաղմոց կքաղեր, արթար էր խընց խոստովանցուցող նորընձեն։

Մտան էդ հ՚եր ու պատարաք կանան։ Էդ նորընձեն օր սաղմոց կքաղեր, էտի էղավ դպիր, էդ նորընձեն քեստեր (զգեստ) հադավ, պատարագ կանավ։ Դպիր տեսավ օր ջուխտ մի խրիշտակ հ՚իճան տերտերոջ կոխքին, էղան սպասավոր, էդ ժամարար տերտեր ղխրիշտրկներ չտեսնա։

Պատարաքն օր սերուփեն, քերուփեն ըսվավ, էղ տերտրոջ խելքն, էն օր պատարաք կէներ, էդ մեկ խրիշտակ առավ ու գնաց։ Գնաց տերտեր, տեսավ օր մարդու մի մեկ կպրե կարասի մեջն էր, մեկ վիշաբ գլոխ կոխեր էր մարդու մեկ անգնջի մեջ, մեկ վիշաբ լէ մեկ անգնջի մեջ, մեկ վիշաբ լէ բերան կոխեր էր բերնի մեջ։ Էդ կպրե կարաս կպեր էր ու կվառվեր, էդ մարդ լէ մեջ։

Խրիշտակն վերուց տերտրոջ ըսեց.— Տերտե՛ր, տեսա՞ր։

Տերտեր ըսավ,— Տեսա՛։

— Դե, —ըսավ,— քըլա։

Գացին շատ ու քիչ, տեսան օր մարդ մի տաս արշնի վրա

իրարուց հեռուն պառեկին վրեն պառկուկ ին։ Մարդու մր մեկ լէ ըդոնց մեջտեխ կէրթեր ու դիգեր, հա կէրթեր էն մեկ մարդու մոտ ու գիգեր էն մարդու մոտ, ինչ օր մրքուքի պես ընդոնց քով կէրթեր գիգեր։ Ու իրեք մարդ լէ կրակի մեջ կվառին, կէնեն ու չէնեն, կրակի մեջեն չկերնեն էլնեն։

Խրիշտակ ըսավ.— Տերտեր, տեսա՞ր։

Ըսավ,— Տեսա։

Էլան մեկ սահաթ ճանապարհ գացին, դացին տեսան օր մարդու մի մեկ կզե, աղոթք կէնա, օր կկզի ուր ծեռներ կդնա կարմիր սամախոռի վրեն (երկաթ), օր չոքեր կզարկա գետին, էմլա կառնա կարմիր սամախոռին, օր ծեռքն ու չոք կիրիցին օր կշիտկի, կարմիր սամախոռ ընդոր վիզ կիրիցի, կկզի էմլան։

Խրիշտակ կըսա.— Տերտեր, էս մարդ լէ տեսա՞ր։

Կըսա.— Տեսա։

Գելնին տերտերն ու խրիշտակ էրկու սահաթ ճանապարհ կէրթան։ Կէրթան, կտեսին օր հանդե կնիկ մի, էրկու շան լակոտ, մեկ էն ծծեն ա կախ, մեկ էն ծծեն ա կախ, ու մազե կարմընջի ծովի վրա նստեր ա ու կրակ քռնե էդ կնիկ, կնիկ կվառի մեջ կրակին, ու գիլա ու կողփա։

Խրիշտակ կվերու կըսա.— Տերտեր, տեսա՞ր իդա կնիկ։

Կըսա.— Տեսա՛։

Կըսա.— Էս կնիկ էն կնիկն ա օր փանջրի տեխեն էկավ ու տուն մեռավ։

Տերտեր Գարրիել խրիշտակին կըսա.— Իդոր մեխքն ի՞նչ ա, օր էդ տանջանքին մեջ կտանջվի։

Խրիշտակ լէ ըսավ.— Էդի օր քըղի խոստովանավ, էն կնիկն է, քըղի պղտիկ մեխքեր խոստովանավ, մեծ մեխք քըղի չխոստովանավ։

Տերտեր վերուց ըսեց.— Մեղա աստծու, ընդոր մեծ մեխքն ի՞նչ ա։

Ըսեց.— Ընդոր մեծ մեխքն էն ա՝ էդի էլավ սիրողութեն էնեց, էդի էրեխով մնաց, էրեխեմ էղավ, բռնեց ուր էրեխեն խեխթեց։ Ընդոր մեծ մեխքն էն ա։

Ըսեց.— Կխնդրիմ իմ տիրոջ մոտեն, օր էդ կնիկ ուր մեխքեն ազատվի։

Խրիշտակ ըսեց.— Խնդիրք կատարվավ։ Կնիկն ազատվավ ու դրախտ գնաց։

Տերտերն ու խրիշտակ դարձան էկան էն մարդու մոտ, որ ընկեր էր էրկու էրկրթի մեջ, աղոթք կէներ։

Ասավ.— Մեղա աստծու, Գաբրիել խրիշտակ, ըսոր մեխքն ի՞նչ ա։

Ասավ.— Ըտոր մեխք. էդ մարդ որ կա, տերտեր ա, էղ էրկրթե լուծ լէ տերտրոշ մեխքն ա, որ մեղավոր էղնի էդ կարմիր էրկրթե լծան մեջ էդրմլա միշտ պտի իրիցի, էդի լէ մեղավոր իրիցու մեխքն ա, որ մինչև հավիտյան էսպես կարմիր էրկրթե լծան տակ լծվի ու ծնկներ իրիցին։

Տերտեր էդտեխ վախեցավ, մեղա տվեց ու խնթրեց աստուծմեն որ՝ «էս պատարաքեն հարձրկվա ու ես էլ պտի սախ չմնամ, վախճանիմ, չէղնի կենդանի մնամ իգամ ընկնիմ էս մեխքի մեջ»։

Էլան տերտեր ու խրիշտակ էդտեխեն ճամբախ ինգան, էկան էդ իրեք մարդու մոտ որ կրակի մեջ կվառեր։

Տերտերն ըսավ.— Մեղա իմ տեր, Գաբրիել խրիշտակ, ըսոնց մեխքն ի՞նչ ա։

Ասավ.— Էս էրկու մարդ սիրողութեն կէնին, էդ մեկ մարդ լէ որ կէրթա գիգա, ընդոնց մեջ միջնորդութեն կէնա, խաբար կտանա կբերա. ընդոնք լէ էդմլա կրակի կեջ պըտի վառին։

Էկան տեսան որ մեկ մարդ որ կպրե կարսի մեջ կիրիցեր, վիշբներ ընդոր անգանշ ու բերան կծծեն։

Տերտեր ըսավ,— Ընդոր մե՞խքն ինչ ա։

Ասավ.— Ընդոր մեխքն էն որ էրկու մարդ ղրուց կէնին, էնիկ կէրթա անգըշդրութեն կէնա։ Մեկ մեխք լէ էն ա, որ վիշաբ ընդոր բերան կծծա, էն մեխքն էն ա, որ հոգի կքֆրա։

Տեսնի որ հանդե տերտեր ինք կանե սկու հ՝առեճ պատարաք կէնա։ Տերտեր պատարաքից կաղատվի, էդ տեխ էդ նորընձեն կվախճանի։

Գելնին տերտեր ու էրկու խրիշտակ մեկ տեխ զէդ տերտեր կպային։